

Գ Ե Ր Շ. Տ. Թ Ո Ր Գ Ո Մ Ա Ր Ք Ե Պ Ս. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն Մ Ե Ր Մ Է Ջ

Ինչպէս գրեթէ ամէն տարի, այս տարի ևս, Հոկտեմբեր ամսուն, մեր մէջ ունեցանք Ս Ուխտիս Միաբան և Հիւս. Ամերիկայի Արեւելեան Թեմի բազմամիայ և բազմարդիւն Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանը, Սրբազանը, Աւելջմիածնէ վերադարձին, Ս. Աթոռ հասաւ Եջ. 10 Հոկտեմբերին և մնաց 10 օրեր, որոնց ընթացքին եկեղեցական հանդիսութեանց իր մասնակցութիւնը բերելէ զատ, 17 Հոկտ. ի Եջ. օրը «Ուխտի Պատարագ» մատոյց Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Նոյն երեկոյ բանախօսեց ժառանգ. Վարժարանի մէծ արահին մէջ, Տքթ. Կարօ Կարապետեանի (Անեւ) գրական գործունէութեան 40ամեայ Յորեւեանին առթիւ կայացած հանդիսութեան (նախաձեռնողն էր Հայ Երիտ. Միութիւնը, Հանդէսին նախագահեց և փակման խօսքը ըրաւ Լուսաբարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.: Հեղինակը, նախկին Սաղիմանայ և այժմ Ժանօթ արաբան յԱմերիկա, եղած է «Սիոն»ի աշխատակից և հեղինակ է չորս հատորներու), իսկ 19 Հոկտ., Եր. երեկոյ, նոյն արահին մէջ նախագահեց Լոնտոնաբնակ Տէր և Տիկին Գրիգոր և Մէրի Իւրէճեաններու երգական դէպքին — կազմակերպուած դարձեալ տեղւոյս Հայ Երիտ. Միութեան կողմէ — և ըրաւ փակման խօսքը: Յաջորդ առաւօտ կանուխ, Սրբազանը վերադարձաւ իր պաշտօնատեղին՝ Նիւ Եորք:

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ Ս. ԱԹՈՒՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ա Ն Ք — Տ Ո Հ Մ Ա Կ Ա Ն Ք

Ե Ղ Ի Վ Ա Ր Դ

(Ք Ե Ր Բ Ո Ւ Վ Յ Ե Ր)

Էջ՝ 168

Օ Տ Ա Ր Ա Կ Ա Ն Ը

Ե Ղ Ի Վ Ա Ր Դ

(Բ. Տպագրութիւն)

Էջ՝ 218

● Գիր. 27 Հոկտ. — Երեկոյեան, Արեւելեան Երբուսաղէմի Y. M. C. A. ի մէջ, Ս. Երկիր այցելող Անկլիթեան Եկեղեցւոյ վերայիշեալ բարձրաստիճան կղերականներուն ի պատիւ սարքուած ընթերցման ներկայ եղան Գերշ. Լուսաբարապետ և Պատր. Փոխանորդ Սրբազանները ԵՃՏԻՐ ԳԵՐՔ ԼԻՆԳՒԵԱՆ:

● Գշ. 29 Հոկտ. Երեկոյեան, Լուսերական Փրօփոթ Եօրկէն Ուէհրման երաժշտի այց-

ցելութեան եկաւ Պատրիարքարանի իրենց կ'ընկերանոր Եօհաննէս Յրէտրիս, որ իբրև նոր Փրօփոթ պիտի յաջորդէր իրեն:

● Եջ. 31 Հոկտ. — Երեկոյեան, Reformation Day և նոր Փրօփոթի ձեռնադրութեան առիթներով Լուսերական Եկեղեցւոյ մէջ կատարուած Երբարկութեան անպիմանջութեան գաւնելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Գիւրեղ Եպս., Լօրք. Տ. Վանիկ Վրք. և Տիար Լինգլիեան: